



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՄԱՆԻԿՍԻԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

ՋԱԻԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

Ի ՆՊԱՏ

Ս. Փ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

ԵՒՏԻ - ԳՈՒԼԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Վ. ՄԻՆԱՍԵԱՆ

Երևան Համալսարանի քիւ. 14

1901

891.99

Պ-20





# ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

ԶԱԻԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ



10 NOV 2011

ԱՂԵՔՍԱՆԴԻ ՓԱՆՈՍԵԱՆ

01.99

pp-20

# Թ Ե Կ Ն Ա Ծ Ո Ւ Ն Ե Բ

ԶԱԻԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

Ի ՆՊԱՍՏ

Ս. Փ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ

ԵԷՏԻ-ԳՈՒԼԷ

معارف تطارت جليله سنك ٥٠٠ نومرولى. وفى ٢١ ذى القعدة  
٣١٨ و ٢٢ شباط ٣١٦ تاريخلو رخصتيله طبع اولمشدر

Կ. ՊՈՒՐՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Վ. ՄԻՆՍՍԵԱՆ

Универс.-Համամ հաստի Թ

1901



*Handwritten notes in Armenian:*  
Հ. Ս. Ֆ. Հ. Այնի 2  
6679-57 - Այնի 2  
Հ. Ս. Ֆ. Հ. Այնի 2

*Handwritten notes in Armenian:*  
Հ. Ս. Ֆ. Հ. Այնի 2  
05-Փ



27.08.2013

59.0

4348

Մասնաւորապէս գրուած, առաջին անգամ ներկայացուած է Ազգ. Հիւանդանոցին համար սրուած Նուագահանդէսին մէջ, Բերա, Իւնիօն Ֆրանսէզի սրահը,  
 11/24 Մարտ, 1901 ին :

Ա Ն Ձ Ր Ն Ք



ՄԵԼՔՈՆ. Ասամնաբոյժ, 26 ԿՈՒՆ. Տ. Օ. ԶԱՅԵԱՆ

ՄԻԼՏՈՆ. Բանասեղծ, 28 » Տ. Օ. ԶԻՖԻԷ-ՍԱՐԱԷ

Տեսարանը Պոչոյ մէջ, մեր օրերը



ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Հիւրասրահ մը, զարդարուն, վայելուց: — Մեկ  
Մոլոր սեղան մը: — Քանարե, բազկաքոն եւ արոն-  
ներ: — Գոնսոյ եւ հայելի: — Պատին վրայ պատկեր-  
ներ, եւն: — Քանարեի վրայ՝ քաղցիւս մեծ քարձ  
մը, որուն կեդրոնը՝ ծաղկակար Քանարի մը մէջ քա-  
ւուած խոշոր Մ գիր մը կայ: — Սեղանին վրայ՝ օրա-  
քերթ մը: — Խորը եւ աջ ու ձախ կողմէն՝ դուռներ:



ՏԵՍԱՐԱՆ Ա.



ՄԵԼՔՈՆ

(Խորի դռնէն կը մտնէ, եւ դէպ ի դուրս  
խօսելով)

Շատ աղէկ, աղէկ, կ'ապատեմ, հոգ չէ՛, պիտի  
ապատեմ, Օրիորդ... — Որքա՛ն ալ սիրուն է, ապա-  
տահին... Օրիորդ ըսի իրեն որ հաճոյք զգայ եւ սիր-  
առը շահիմ... Սերէս իրեն ալ պէտք ունենամ...  
(Շուրջը զննելով) Բայց կոկիկ, շատ կոկիկ ու վա-



յելուչ է այս սենեակը... Մինաս էֆէնտին ալ՝ շատ ազնիւ ու շնորհքով է . իր օրինակն ալ շատ ազնիւ ու շնորհքով է . . . իսկ իրենց աղջիկը, ա՛հ, իրենց աղջիկը, ա՛հ, շատ, ամենէն աւելի սիրուն ու շնորհալի է: Այո՛, եւ անոր համար, բռնկած ու բորբոքած, կը յանդգնիմ իր ծնողացը ներկայանալ այսօր . . . — Հայրը, Մինաս էֆէնտի, փաստաբան է . շատ լա՛ւ, ես ալ դատ մ'ունիմ . . . երեւակայական, որուն վրայ իրեն խորհուրդ հարցունելու եկած կ'ըլլամ . . . եւ իրեն կը բանամ աղջկան խօսքն ու . . . կնուծեան կուզեմ: Դատը վերջը կը գտնենք, — եթէ պէտք ըլլայ . . . : Հարկաւ բան մը կը հնարեմ . . . կ'ստեղծեմ . . . : Դատ կը բանամ տանտիրոջս . . . Թուծակին դէմ որ, օրն ի բուն, խա՛ խա՛ խա՛, բէ՛ բէ՛ բէ՛, բա՛ բա՛ բա՛ — երեք վանկով խաբեբա՛յ կը պոռչըտայ զխուս վրայ . . . եւ բաշուելի՛ք բան չէ . . . :

Ամիս մը կայ, Իւնիոնի պարահանդէսն էի, հոն պարեցի պաշտելի էակի մը հետ՝ մարմարեայ լուսափայլ ուսերու մէջտեղ, հիանալի, ա՛հ, հի-ւն-նանի, կըսեմ ձեզի, զլուխ մ'ունէր, և ի՛նչ սիրուն բերան, ի՛նչ վառվռուն աչքեր . . . ու տարիքն՝ հազիւ տասնեւեօթն, տասնեւուծն, չէ՛, իրաւ, աւելի չիկար . . . : Մնացածը՝ կը գուշակուի. շփացայ, քծնեցայ, լեզու թափեցի. «Այն, օրիորդ, ո՛չ, օրիորդ, ինչ գեղեցիկ արդուգարդ, ինչ փոքրիկ ձեռներ ունիք, օրիորդ, թռչունի պէս կը պարէք օրիորդ . . . » եւ օրիորդը կարմրեցաւ, ճերմկեցաւ «Ո՛հ, պարոն, ա՛հ, պարոն, հ՛չ, պարոն, ի՛նչ կ'ըսէք, պա՛րոն . . . » ու

կը մտերմանալ, անուն, մականուն, Թաղ ու տանն հասցէն կ'իմանամ իրմէ եւ . . . ահա՛ւասիկ. Մինաս էֆէնտին գալուն կ'սպասեմ՝ Շուշանիկն իրմէ ուզելու համար . . . : Ա՛հ, Շուշանիկ է անունը, անուշիկ անուն, նոնօշի՛կ անուն . . . : Բայց կուշանայ ապագայ - ո՛չ մօտակայ - աներս . . . : Սիրե՛լ եւ սպասել, ինչ չարչարանք, ի՛նչ տանջանք . . . : Ա՛. լրագիր մը կայ. Ծաղիկ պատուական օրամերթը . . . տեսնենք բան մը կան մէջը . . . (կը նստի սեղանիկն քով եւ քերթը կ'առնու. նշմարելով Միշօնը որ կ'երեւի) մա՛րդ կուգայ . . . Մինաս էֆէնտին է . . . ո՛չ, անծանօթ մը, դատախազ մը, անտարակոյս . . . (Թերթը կարդալ կ'սկսի:)

### Տ Ե Ս Ս Տ Ր Ա Ն Բ .

Մ Ե Լ Բ Ո Ն — Մ Ի Լ Տ Ո Ն

Միշօն. (Խորի դռնէն կը մտնէ դէպ ի դուրս խօսելով) . . . Պիտի սպասեմ, աղէկ. կ'սպասեմ, շնալաւ, շնա աղէկ, օրիորդ, (յառաջանալով. մեկուսի) հը, հը՛մ, սիրունիկ է, սպասուհին, Օրիորդ ըսի, ղիտմամբ, որ հաճոյք զգայ, էհ, ո՛վ զիտէ, Թերեւս պէտք ունենամ իրեն . . . (Մեղքներ նշմարելով) Ա՛հ, կ'երեւայ որ երկրորդն եմ ես: Դատախազ մ'է անշուշտ աս մարդը . . . :

Մելօն. (Միշօնիկն նայելով, մեկուսի) Ինձի



այնպէս կուգայ որ այս դէմքը տեղ մը տեսած եմ ես . . .

Միլսոն. (ձեկուռի) Ի՞նչ բտելու է հիմայ Միմաս էֆէնտիին . . . Ո՛չ դատ ունիմ ոչ ալ խնդիր փաստաբանի կարօտ . . . բայց Սէրը ներշնչում պիտի տայ ինձի, Սէրը, որ բանաստեղծներուն հոգւոյն սլացք ու մտքին ծռի՛չ կուտայ, ա՛հ (ներշնչուած)

. . . Սէր, փառք բզեզ, քսեղծողին . . .

Շողգամ, կաղամբ, տխր, ըսեպղին,

Շուշանափայլ ծաղիկ կոյսեր

Բզեզ կ'երգեն, կը պաշտեն, Սէր . . .

Այս բառեակը, ի՛նչ գեղեցիկ, հէ՛, անցեալները գիշեր մը, յանպատրաստից քերթեցի Միմաս էֆ. ի աղջկան, Օր. Շուշանիկին համար . . . «Շուշանափայլ ծաղիկ կոյսեր . . . » ի՛նչ չքնաղ գիւտ, ի՛նչ վսեմ իմաստ . . . : Եւ այսօր ալ եկած եմ . . . (Մեղխնէին նայելով) բայց այս դէմքը օտար չէ ինձի. ուր տեսած եմ արդեօք . . . (Մեղխնէ աչիւրեան կը նայի, գիտար կը բարեւեմ գլխով) :

Մելինն. (ձեկուռի) Բարեկիրթ մէկը կ'երեւի աս մարդը :

Միլսոն. (շուրջը դիտելով, ձեկուռի) Ի՛նչ գեղեցիկ տուն, նոխ կարասիներ, շատ սիրուն, կանոնաւոր, որոնց մէջ Շուշանիկ կը շողայ ու կը ճլվայ . . . : (ներշնչուած)

Ա.

Շուշան, քաղցր անուն,  
Բոյրով մ'անանուն,  
Գրաւէ ամենուն,  
Հիացումն անհուն . . .

Գ.

Սի՛րս իմ, մի՛ դողար,  
Զեմոց ու քաղար  
— Երգէ՛ դու, է՞ր լաս —  
Ի՞նչ պիտի ըլլաս . . .

Ա.

Շուշանիկ, Շուշան . . .  
Զինչ սիրոյ նրան,  
Կոյս մ'է՛ ծաղկաքի  
Որ հոս կը փքքի . . . :

Գ.

Ես՝ փեսայ այս քան.  
Կոյսն՝ ինձ ապաստան,  
Շուշանն՝ երբ հարս քան,  
Կեանքս է բուրասան . . . :

Մելինն. (ձեկուռի) Ինքնիրեն կը խօսի . . . անշուշտ իր փաստերը կը հեզէ, կը պատրաստէ Միմաս էֆ.ին պարզելու համար . . . : Եւ ըսել թէ՛ մարդիկ կան որոնք դատ կ'ունենան աշխարհիս մէջ . . . :

Միլսոն. (ձեկուռի) Խարդախութեան մը զոհ գացած անն մէկն ալ, խեղճ երիտասարդ, եւ ըսել թէ՛ իրա՛ւ, շատեր կան որոնք տարիներով ժամանակ կ'անցունեն օտար դատարաններու մէջ . . . (Մեղխնէ Միլսոնին կը նայի, գիտար կը բարեւեմ կրկին) Բաղաբավար ալ է մարդուկը, իր դատին մէջ անպատճառ անիրաւ ըլլալու է . . . որովհետեւ շատ քաղաքավար է . . . :

Մելինն. (ձեկուռի) Ի՛նչ կրնայ ըլլալ այս խեղճին հոս գալուն պատճառը . . . Կնճըր դէմ դատ ունի արդեօք, ամուսնալուծութիւն կը պահանջէ . . . բայց Գատապտանական Խորհուրդը փաստաբան չընդունիր . . . էհ, շատ ալ երիտասարդ է, եւ անշուշտ՝



ամուրի . (յանկարծ) ի՛նչ . . . ամուրի . . . կրնայ ըլ-  
յալ . . . Իւնիօնի պարահանդէսը եկած էր կարծեմ . . .  
նվ է , ուր հանդիպած եմ իրեն . . . չեմ յիշեր :

Միլսոն . (մեկուսի) Մինաս էֆ.ն հիմայ որ գայ ,  
ինչպէս խօսք բանամ , ինչ պատմեմ որ ճշմարտա-  
նման ըլլայ . . . :

Մելինոն . (Միլսոնը դիտելով , մեկուսի) Հա-  
գուստը տեղն է , թէեւ քիչ մը անհարկի ճաշակով . . .  
դեփոփոխն ձեռնոց , կաս կարմիր փողկապ , ճեփճեր-  
մակ կոշիկներ , սակի ակնոցով եւ աչքերը՝ մալորուն . . .  
իսկ մազ ու մօրուք . . . արուեստագիտակա՛ն . . . : Ի՞նչ  
գործ ունի հոս . . . խօսիմ ու նայինք . . . (ոսփի կ'ել-  
ջէ , եւ հագաշով) հը , հըմ , հը՛մ . . . :

Միլսոն . (մեկուսի) Կը հագայ , հարբուխ է ե-  
ղեր . . . :

Մելինոն . (երգելով) Թրն , Թրն , լն լն լն , Թրա  
լն լն .

Միլսոն . (մեկուսի) Բայց զուարթ ալ է մար-  
դուկը . . . (դիտելով Մելինոնը որ կը պրօքրօկի  
ցասփրօտելով) զնրմանք որ զինքը ուր տեսած ըլլալս  
չեմ յիշեր . . . այս դէմքը , ձեւերը . . . : Դատ չունի  
արդեօք . . . ինծի պէս . . . : Է՛հ , խենթ բաներ կը  
մտածեմ . . . :

Մելինոն . (խօսել սկսելով , ինկնիրեն , բարձր)  
Է՛հ , բաւական ուշացաւ , Մինաս էֆէնտին . . . :

Միլսոն . Այ՛ո՛ , բաւական . . . :

Մելինոն . Գործերը շատ են , չափազանց շատ . . . :

Միլսոն . Վարել շատ գործեր — դիւրին չեմ կար-  
ծեր . . . :

Մելինոն . Բայց , ի՞նչ մարդ , ի՛նչ տաղանդ . . . :

Միլսոն . (յանկարծ , ներշնչուած) .

Տաղա՛նդ . այո , վլսե՛մ աղանդ . . .  
Ամառ , ձմեռ , Ձատիկ , Կաղանդ ,  
Փաստեռու մէջ , բրնա՛ւ կաղ անդ ,  
Հոգի , միտք եւ ունկնաբաղանդ  
Հըմայելով . . .

Մելինոն . (շուարած) Է՛հ , է՛հ , բարեկամ . . . (մե-  
կուսի) , փախնէկ է , ինչ է . . . :

Միլսոն . . . Կսպառէ խա՛նդ .

Ինքզինքս ներկայացունելէ առաջ , հանճարս ու ներ-  
շընչումս կը ծանօթացունեմ ձեզ , Պարոն . . . (Խոնար-  
հելով) .

« Համես եւ անկեղծ

« Եմ ես բանաստեղծ . . .

« Ձեռքս չառած բուրբ ու գորիչ .

« Միտքս կ'առնէ քեւ ու քրոնիչ

« Եւ բողբոլ իր բոյնն ու պատեան ,

« Սլանայ մինչեւ ամպոց յատեան .

« Երկի՛նքն է վայրն իր հանգստեան ,

« Այժմ , որպէս միտք եւ յաւիտեան :

« Անձրեւ , Արեւ , կալլակ , փայլակ ,

« Զիս ներհնչեն պնայլայլակ . . .

« Քնարիս քելեր խնդան ու լան . . .

« Իմ անունս է՛ Միլսոն Սէլլան :



Մելինն. (խոնարհեցող) Ա՛հ, ա՛հ, շատ շնորհակալ եմ, որասխ եմ, պատիւ կը համարիմ, Պարոն... — Իսկ ես, Մելքոն-Խնդում-Նիկողիմնն, (առաջ) Ատամնաբոյժ Ամերիկեան, վկայեալ Բաժակոնիոյ Վէսթերնինիա բաղաբին տիեզերահոչակ Համալսարանէն, Պատուակալ անդամ եւ Թղթակից Կալիւթայի, Ամաժերտամի, Բրէժօրիայի, Բէքինի, Պէրլինի, Քամչակայի, Չանդիպարի, Լոնտօնի, Մէլպուրնի եւ... Եէտիգուլէի Ատամնաբուժական Ակադեմիաներուն: Գիտութեան եւ արհեստին կատարելագործուած ամենավերջին դեղերու եւ գործիքներու միջոցաւ, փութով և խնամով կը դարմանէ և կը բուժէ բերանի, կլակի, ծնօտի, քիմքերու, լինտերու և ակունքերու նոր Թէ հին, մեծ Թէ փոքրիկ, ծանօթ Թէ անծանօթ բոլոր հիւանդութիւնները. խարխուլ ակունքները կը նորոգէ ի հիմանց, փտտածները կը բաշէ առանց ցաւի, կամ արմատէն կը բուսցընէ վերտին, կամ ոսկւով ու բլածինով կը լեցունէ, և կը պատրաստէ չափի վրայ նոր ակունքներ այնքան սիրուն եւ դիմացկուն որ պողպատը կը փարատեն, եւ աղամանդը փոշի կը դարձունեն...:

Գիներ չափաւ որ — վկայեալ աղբատաց ձրի — ապառիկ չիկա՛յ. — Երկու ակուայ բաշել տուողին, երրորդ մըն ալ կը բաշէ... առանց փոխարինութեան... — Սխալ բաշուած ակունքերը իրենց տեղը կը զետեղէ՝ ձրիապէս:

Կը գտնուի իր դարմանատունը, ամէն օր, ժամը 8 Էն 5 ըստ. Եւր. ի Գանըմ Քաշա, Պուրլար Տէլի-

աւ, Թիւ 100. (Գրպակէն ծրար մը ծանուցումներ հանեցող Միլսոնիկ կուսայ): Կ'աղաչեմ, առէք ստոնք եւ յանձնարարեցէք ինձ ձեր բոլոր ծանօթները... գրագէտ ու վարժապետներէն զատ: Եւ ամէն անգամ որ ակունքիդ ցաւի (քեւը ցոյց տալով) դաստակաւ ձեր տրամադրութեան տակ է... ձրիապէս:

Միլսոն. (մեկուսի) Էօ՛Ք, ի՛նչ ունայնասիւս... գուլիս ուռեցու. (բարձր) շնորհակալ եմ, պարոն (Թռչրերն առնեցող կը գրպակէ) չեմ մոռնար, բայց... յանախորդի հետ առնելիքի դատ մ'ունիք արդեօք որ...:

Մելինն. (կնկնաշող) Ո՛հ, այն, այն, հիմակունան յանախորդները՝ յանախ... խորթ են... — Իսկ դո՛ւք... որ բանաստեղծ էք...:

Միլսոն. (անխորհուրդ) Է՛հ, այն, ես ալ, դատունիմ, հրատարակչիս հետ, ու խերը պիտի անի՞ծեմ անոր...:

Մելինն. Այն, բայց փաստաբանները դրամ կուզեն... ես հազա՛ր ոսկի ծախսած՝ եմ մինչև այսօր...:

Միլսոն. Ա՛յդքան միայն... է՛հ, իմա՛ երկու հազարը անցած է... պահանջքիս զուամար:

Մելինն. (մեկուսի) Հաւտն որ կլլեցի... (բարձր) եւ այսօր ալ, ուրեմն...:

Միլսոն. Կ'ըսէիք Թէ եկած էք դատ բանալու համար...:

Մելինն. Տանտիրոջս դէմ, այն, որ Թուժակ մ'ունի շատախօս եւ աներես, որ օրն ի բուն իմ



վրայի պատուհանէն խն-խն-խն, բէ-բէ-բէ, բն-բն-բն կը պռռայ, ինը վանկով խաբեբայ կ'ընէ զիս, եւ քահ քահ մըն ալ ետեւէն թող կուտայ... ու կը ծաղրէ զիս... անպիտան'ը, խայտառակ'ը:

Միլսոն. Ա՛հ. իրան: (մեկոռնի) Ես ինչ պիտի բռնամ:

Մելինոն. Հապա չէք զիտեր, իր միւս յանկերզը որ ջիդերըս թունդ կը հանէ...:

Միլսոն. Ուրիշ ալ ունի...:

Մելինոն. ... կռա՛ա, կռա՛ա, կռա՛ա կօ՛ս, կը՛ կրկնէ ու կը կըրկնէ... ա՛հ, Կիրակոս անունը...:

Միլսոն. Ի՞նչու... պատճանոր...:

Մելինոն. Տասնեւհինգ հազար ոսկինոց ազգական մ'ունէի, ամուրի, որուն միակ յուսալից եւ անխուսափելի... ժառանգորդը՝ Ես էի...: Բայց կուզէք որ այս մարդը մեռնէլէն տարի մ'առաջ իր բոլոր ունեցածը կտակէ Ապուշանոց մը հիմնելու, և կտակն ալ կանխիկ վճարելով գործադրէ... ապո՛ւշը...: Եւ արդէն հոն առաջին մտնողն ու մեռնողը ինքն էղաւ... անունը Կիրակոս էր:

Միլսոն. Ով անզուգական բարերար... եւ դուք կ'անարգէք իր վեհ յիշատակը... (ճեղքը ճռած):

Հանգի՛ր խաղաղ, հոգի վրսեմ,  
Փառաց դրախտին հասեալ ի սեմ,  
Ըզպտե՛ն գործոց բոյոց՝ լըսեմ  
Գանգա՛նիլ այժմ ոմն անձ նըսեմ...:

Մելինոն. (ծաղրով) Հէ՛, հէ՛, խենդ է չէնէ սեր-սեւ...:

Միլսոն. Եւ հիմայ... դատ կը բանար...:

Մելինոն. Երկն հատ. մին՝ տանտիրօջս թուծակին դէմ՝ պատուոյ դատ, զիս խն-խն, բէ-բէ, բն-բն ու խաբեբայ անուանելուն, հռչակելուն համար...:

Միլսոն. Եւ հատ մըն ալ...:

Մելինոն Ապուշանոցին դէմ...:

Միլսոն. Ինչո՛ւ. զձեզ ընդունիլ չուզեցին հոն...:

Մելինոն. Էհ, հչ: Ազգականս իր ըրած կտակովն ու մանաւանդ զայն կանխավձար գործադրելովը՝ անվիճելի, ակներեւ ապացոյցը տուած չըլլար որ ի բնէ ուղեղը բժացած ապուշապետ մըն էր ինքը... հետեւաբար...:

Միլսոն. Հետեւաբար...:

Մելինոն. Ապուշներն իրենց ստացուածքը վարելու, գործածելու գիտակցութիւնը չեն ունենար, ըրածնին ապօրէն և անվաւեր է... ինչ խե՛նդ և այլանդակ բան... բարերար կոչուելու համար Ապուշներուն՝ Ապուշանոց մը հիմնել և կործանել իր միակ և խելացի ժառանգորդը՝ զիս...: Եւ պիտի պահանջեմ որ Ապուշանոցն խն է, ստացուածքս է, իր եկամուտներովը, գոյքերովը...:

Միլսոն. Եւ ապուշներովը...:

Մելինոն. Միմաս էֆէնտին կը շահի այս դատը, տարակոյս չունիմ...: Իսկ դու ինչու չես խոստում չարտարիւրը...:





Միլսոն. (վարանոս) Հը՛մ, հը՛մ, ա՛հ, իմա . . .  
(մեկուսի) ներշնչուի՛նք . . .

Գրագէտ մ՛եմ ես, աննման եերող,  
Աշխարհ ինձ պարտի մտմարեայ կորող.  
Բայց պատիւս ու փառքս ի հիմանց Բանբող  
Տըպագրիչ՝ մը կայ, Կունսիկեան Բարբող,  
Որուն անունն ինձ՝ ազդէ սրտադող . . . :

Մելինոն. (անհամբեր) Կը խոնարհի՛մ ձեր հիա-  
նալի տաղանդին առջեւ . . . վերջը . . . :

Միլսոն. (երկմտած) Ըսեղն եմ . . . չեմ գիտեր . . . :

Մելինոն. Ըսէ՛ք, ըսէ՛ք, մի վախնաք. գաղտնիք  
պահելու վարժ եմ ես. այնքան կեղծ ակուաներ շի-  
նող մը թուլ բերան չ՛ըլլար :

Միլսոն. . . . Գառլուվայի Ակադեմիային ընտրելի  
ներկայացած էի . . . . Գիտնալու էք որ նոր Գարը  
նոր բարքեր յառաջ բերած է . . . Գառլուվայի գրական  
կանոններուն մէջ . . . : Հոն, հիմայ, Գաղղիոյ Ակա-  
դեմիային պէս չեն ըներ. ընտրելիները մուտքի ճառ  
մը կը պատրաստեն կանխաւ, որ կը ցրուեն միւս  
անդամներուն, և հանդիսաւոր նիստի մը մէջ կը կար-  
դացուի . . . և անոնցմէ որն որ հաւնուի . . . :

Մելինոն. (ընդմիջելով) Բայց, ներեցէք, չեմ  
հասկնար, տպագրիչը ինչ գործ ունի . . . :

Միլսոն. (նեղսիրտ) Է՛հ, չէք հասկնար, որով-  
հետեւ շատ կը զբաղիք . . . սպուշանոցով . . . : Ճառս  
կը գրեմ, արձակ բերթուած մը, Գովարանութիւն մը

Գառլուվայի . . . ջերմուկներուն վրայ, որ հրաշակերտ  
մը կ'ըլլայ. պնդապէս հոյակապ :

Մելինոն. Կը խոնարհի՛մ ձեր հիանալի տաղան-  
դին առջեւ . . . ե՞տըր :

Միլսոն . . . Կ'սկսէի, սնուկէս. «Գովարանութիւն  
Գառլուվայի ջերմուկներուն. — «Հանճարը չէ. տա-  
ղանդը չէ որ կը պակսի ձեզ, պարոններ, և վստահ  
եմ որ պիտի գնահատէք ու ձեզ ամոռակից ընդու-  
նիք զիս՝ որ հանճարով ծնած ու տաղանդով սնած,  
կուգամ արդ մատուցանել ձեզ ըստ կարի . . . » :

Մելինոն. Կը խոնարհի՛մ ձեր հիանալի տաղանդին  
առջեւ, բայց . . . չեմ հասկնար . . . :

Միլսոն. Տպ սգրիչ Կունտիկեանին կը զրկեմ,  
փորձերը կուգան, կը սրբագրեմ կրկին կրկին, անյ-  
քան խնամով որ ստորակէտ մ'անգամ սխալ չի  
մնար . . . : Ընտրութեան օրը, Ակադեմիականք նիստը  
գումարած պատրաստ են ու ճառս դեռ չի գար . . . :  
Կիրքէս, սրտնեղութենէս պիտի պայծիմ կամ խեն-  
դենամ . . . կամ թուածահար ըլլալու մօտ եմ . . . երբ,  
վերջապէ՛ս, զրաշար մը վազն ի վազ կը հասնի, մէկ  
միակ օրինակ մը կը բերէ ճառէս . . . : Քարտուղարը  
կ'առնէ զայն իսկոյն, զանգակը կը հնչէ, ձայն ու  
շշուկ կը դաղրին բոլոր, ու, վեհաշուք լուծեան մը  
մէջ, նախագահը կը կանգնի բեմը և կ'սկսի կար-  
դալ . . . «Կովարանութիւն Գառլուվայի գեր մոռ-  
կերուն . . . Հաճարք չէ, Կաղանքը չէ որ կը  
պակսի ձեզի, պարոններ, և վստահ եմ որ պիտի  
գնահատէք ու ձեզ ախոռակից ընդունիք զիս որ



կուգամ յա՛րդ մատուցանել ձեզ, շա՛ս գարի...»  
 Զարհուրելի խառնակոչում մը կը պայծի... կը սու-  
 լեն, կը պոռան, կը խնդան ու կը ծաղրեն զիս ամէն  
 կողմէն, և խայտառակուած դուքս կը նետուիմ... :  
 Կովաբանուծի՛ւն, Գառլովայի գէր մուկներս՛ւն, հա-  
 ճարով, կաղամբով անած, ակոռակից, յնրդ մատու-  
 ցանել ու շատ գարի՛... : Տպագրիչը ըսել տուաւ ինձ  
 այս այլանդակ հայհոյուծիւնները. անուն, համբաւ,  
 պատիւ, դիրք ու ապագաս խորտակեցան... ինն տա-  
 ռասխալի համար — և 900 ոսկի տուգանք պիտի  
 պահանջեմ Կոնստիկեանէն — ահա՛ Մինաս էֆ ին  
 գալուս պատճառը... :

Մելոն. (մեկուշի) Իրաւ շոշորդ է այս մարդը...  
 (քարձր) Օհ. տարակոյս չունիմ որ այդ դատը Մի-  
 նաս էֆ.ին կը շահի դիւրաւ... :

Միլսոն. (մեկուշի) Հաւտացուցի՛նք... երանե-  
 լի են սա ապուշները... : (քարձր) Գուր շատոնց է  
 որ Մինաս էֆ.ն կը ճանչնար :

Մելոն. (քեթեւօրէն) Ե՞ս. ոչ, Իւնիոնի պարա-  
 հանդէսին մէջ ճանչցայ զինքը :

Միլսոն. (մեկուշի) Ի՞նչ կ'ըսէ... (քարձր) որ,  
 վերջին պարահանդէսին մէջ... :

Մելոն. Ը՛հ... այո՛... հոն (մեկուշի) սխալ  
 խօսք մ'ըրի :

Միլսոն. (մեկուշի) Կասկածելի մարդ է...  
 (քարձր) բայց զձեզ չի տեսայ հոն... :

Մելոն. Ի՛նչ. դուք ալ հոն էիք... (մեկուշի)

կասկածելի մարդ է սա. (քարձր) ես... գործով մը  
 գացած էի... :

Միլսոն. Գուր, ատամաբոյժ. ինչ գործով... :

Մելոն. Երկրորդ սխալ... (քարձր) է՛հ, այո՛,  
 ակուայ քաշելու համար... :

Միլսոն. Ակուայ, բայց որհնը... :

Մելոն. Նուագապետին. սինեօր Սանժուանի,  
 ծնօտը իմ շարժուն կալուածներէս մին է... : Այն ի-  
 ըրիկունը ակուան սաստիկ կը ցաւէր, զիս հրաւիրած  
 էր որ... :

Միլսոն. (ընդմիջելոյ) Տունն երթաք, անշուշտ,  
 բանի որ դաշնակով պարեցին այն զիշերը և նուա-  
 գապետ ու խումբ չիկար բնաւ... :

Մելոն. Այո՛, այնպէս էր... բայց իր կինը պա-  
 րահանդէս էր գացած... և ես եկայ անոր իմացու-  
 նելու որ... :

Միլսոն. Նիւթը փոխենք... (քարձր) Կինը ը-  
 սիք... Մինաս էֆ.ն ալ կարգուած է, կարծեմ :

Մելոն. (անխորհուրդ) Ո՛հ, այո՛, սքանչելի  
 կին մ'ունի :

Միլսոն. (շուքոյ) Կը ճանչնանք... :

Մելոն. Ե՞ս... հչ... լսած եմ միայն...  
 ինծի ըսած են թէ աղջիկ մըն ալ ունի... :

Միլսոն. (անխորհուրդ) Պաշտելի՛, այո՛... :

Մելոն. (շուքոյ) Կը ճանչնանք... :

Միլսոն. (շուքոյ) Ե՞ս, հչ, լսած եմ... ին-  
 ծի ըսած են միայն թէ... :



Մելինն. (մեկուսի) Կը շփոթի . . . ալ տարակոյս չիկայ . . . :

Միլսոն. Խարտենչ աղջիկ մը , կարծեմ . . .

Մելինն. Ո՛հ , թխադէմ , սև աչուի . . . :

Միլսոն. Ա՛հ , դուք ալ գիտէք . . . :

Մելինն. Ե՞ս . . . ոչինչ . . . բարեկամ մ'ունիմ . . . որուն մօրաբայրը անոր . . . ինծի . . . բայց , ո՛չ , ես չեմ ճանչնար :

Միլսոն. (մեկուսի) Ինձ այնպէս կուգայ որ այս մարդուն դատը . . . երեւակայական է :

Մելինն. (մեկուսի) Թուծակն ու ապուշանոցը՝ վախնամ որ չկրցայ կլլեցնել. (քարձր) Է՛հ , որքա՛ն ալ ուշացաւ , տեսնենք , Մինաս էֆէնտին դատերնուս համար ինչ կարծիք պիտի յայտնէ :

Միլսոն. (մեկուսի) Այս մարդը աչքս չի բռներ . . . Աղջկանն համար եկած ըլլալու է , ջանանք հեռուցունել զինքը. (քարձր) ներեցէք , պարոն , ձեզի խըրստ մը տամ . . . :

Մելինն. Խրատ մը , հրամեցէք :

Միլսոն. Ձեր պատմածին համեմատ , դատերնիդ շատ կնճռոտ է , կարծեմ Մինաս էֆէնտին մէջէն չպիտի կրնայ ելլել . . . կամ իրաւացի հանել զձեզ :

Մելինն. (մեկուսի) Կը գուշակեմ ըսելիքդ . . . շարունակէ . . . (քարձր) Ինչո՞ւ այդ կասկածը . . . :

Միլսոն. Մինաս էֆէնտին լաւ փաստաբան մըն էր . . . երբեմն . իսկ հիմայ՝ մտամլոր մարդ մ'եղած է . . . :

Մելինն . Իրաւ :

Միլսոն. Ձէիք գիտեր . . . այս մէկ տարուան մէջ իր կորսնցուցած դատերը ձեր քաջած ակումներէն շատ են . . . :

Մելինն. Ի՞նչ կ'ըսէք . . . :

Միլսոն. Առաջնակարգ օրէնագէտ և ատենաբան մըն է . . . :

Մելինն. Է՛հ լաւ , ուրեմն . . . :

Միլսոն . Երբ իր տան , իր գրասենեակին մէջ , իր գիրքերուն ու թուղթերուն հետ առանձինն է , կամ իրիկանները՝ բարեկամներու հետ օղիի շիշը շրջապատած . . . : Բայց դատարանին մէջ՝ կը շուարի , կը կմկմայ , եւ երբ լեզուն չի բռնուի՝ խօսքին թեյն ու դատողութիւնը՝ այնքան կը կորսնցունէ որ իր պաշտպանեալին դատապարտութիւնը կը պահանջէ . . . :

Մելինն . (հեզվող ծաղրով) Եւ դուք ալ , այսպէս ըլլալը գիտնալով , ձեր դատն իրեն յանձնելու եկած էք , հէ , պարոն :

Միլսոն. (շնորհած) Ե՞ս . . . (մեկուսի) բռնուեցայ , չեղաւ (քարձր) հապա դուք , պարոն . . . :

Մելինն. Բայց խնդիրը իմ վրաս չէ , պարոն :

Միլսոն. (շեշտ փոխելով) .

Պարո՛ն , չեմ կրնար հանդուրժել երբէք Ո՛ր անոր վրայ ցեխ ու մուր բափէք , եւ չի դաւանիք ինձ հետ միաբան Մինաս էֆէնտին մի մեծ փաստաբան :

Մելինն. (կրֆոս) Ե՞ս . . . — բայց դուք էիք հիմայ զինքն աւրըշտըկողը . (մեկուսի) Ի՞նչ անհեթեթ



մարդ . բանաստեղծ չէ մի , նեղը մնալուն պէս ոտ-  
քերով կը խօսի — կամ ոտանաւոր — բան մ'ըսած  
չըլլալու համար . . . :

Միլսոն . Այո՛ , պէ՛տ է ձեզ կրկնեմ վերստին .  
Մե՛ծ փաստաբան մ'է Մինաս էֆէնսին .  
Տիկինն ալ սիրուն եւ հանոյական ,  
Իսկ չիկա՛յ նըմանն իրենց . . . աղջրկան . . .

Մելինն . Տեսա՛ք հիմայ , կը ճանչնա՛ք եղեր զի-  
րենք , ամենքն ալ . . . :

Միլսոն . Այո՛ , այո՛ , պարոն :

Մելինն . Է՛հ , լա՛ւ , ես ալ կը ճանչնամ :

Միլսոն . Բայց ո՛չ ինձ չափ լաւ , անշնչտ :

Մելինն . Կը ներէ՛ք , պարոն , թերեւ աւելի՛ :

Միլսոն . Գատ , եւայլն , չունիք ուրեմն , հէ՛ . . . :

Մելինն . Չեղի չափ , կամ ո՛չ աւելի . . . :

Միլսոն . Աղէկ , աղէկ , վիճակնիս ճշգուեցաւ ,  
գէ՛ծ կեղծելու պէտք չի մնար . . . :

Մելինն . (ընդմիջելով) Ո՛չ ալ հաճարով ու կա-  
ղամբով սնանող կովերու ախտակից ըլլալու , պա-  
րոն :

Միլսոն . Ո՛չ ալ թուծակէն խաբեբայ կոչուելով ,  
Ապուշանոց մը գրաւել ուզելու , պարոն :

Մելինն . Հասկցուեցաւ . . . փաստաբանին ո՛չ թէ  
կարծիքը , հապա աղջիկն ուզելու եկած ենք հոս եր-  
կուքս ալ . . .

Միլսոն . (ներշնչեալ) .

Ճումարի՛ս է , ճումարիս ,  
Շուշանիկն է մարգարիս  
Որ պիտի գայ քանկագին  
Պերճանքն ըլլալ իմ կեանքին :

Մելինն . (մեկոռալի) Է՛օ՛ֆ , անտանելի մարդ , ոտ-  
քերով կը խօսի նորէն : (Բարձր) Բարեբաղդաբար ,  
Ես եկայ առաջ , և առաջին խօսողն ու աղջիկն ու-  
զողը ես պիտի ըլլամ :

Միլսոն . Բժիշկի տունն եկած հիւանդներ չենք  
որ առաջնութեան կարգը նայուի : Այցելուներ ենք  
երկուքս ալ , և հաւասար իրարու , պարոն :

Մելինն . Ոչ , ո՛չ , ո՛չ , ես առաջ եկած , առաջ պի-  
տի խօսիմ , պարոն :

Միլսոն . Ամենեւ ին , պարոն :

Մելինն . Անտարակո՛յս , պարոն :

Միլսոն . Այդպէս է , ուրեմն երկուքնիս ալ չի  
խօսինք . . . :

Մելինն . Հապա . . .

Միլսոն . Պոռանք . որուն ձայնն որ միւսինը խա-  
փանէ , կ'ըլլայ առաջին խօսող . . . :

Մելինն . (ձայնը քարձրացումէնով) Ո՛հ , այն  
ատեն , պարոն . . . :

Միլսոն . (աւելի քարձր) Չենէ չեմ վախնար ,  
պարոն :

Մելինն . (աւելի քարձր) Ո՛չ ալ ես՝ ձենէ , պա-  
րոն :

Միլսոն . (աւելի քարձր) Հիմայ կը տեսնենք ,  
պարոն :



Մեյֆոն. (աւելի քարճր) Պիտի պտպանձիբ, պարոն . . . :

Միլսոն. (սոյորակիան ճայնոյ, շնչասպառ) Լւն. առաջուց ինքզինքնիս յոգնեցունել աւելորդ է :

Մեյֆոն. (նոյնպէս) Այո՛, շատ իրաւունք ունիք . միայն, կարեւորը, այս պարագային մէջ, զիտնալն է թէ Օր. Շուշանիկ մեր երկուքէն որո՞ւն պիտի հաւնի . . . :

Միլսոն. Ինձի, պարոն, անպան-հո-վան-պէս . . . :

Մեյֆոն. Ինձի, պարոն, անպան-հո-վան-պէս :

Միլսոն. Բայց ինչո՞ւ ձեզի, կ'աղաչեմ . . . :

Մեյֆոն. Որովհետեւ . . . երեք վալս դարձանք միասին . . .

Միլսոն. Ես՝ չորս վալս, և հինգ ալ բոլբա . . . :

Մեյֆոն. Ես՝ ուժը, և երկու գատրիլ . . .

Միլսոն. Հապա սօթիշները . . . :

Մեյֆոն. Երեք հատ՝ ինձի հետ . . . :

Միլսոն. (հեզմոտ) Երազնուդ մէջ՝ անշուշտ . . . Կարգացոյցին մէջ սօթիշ չէին դրած, բարեկամ :

Մեյֆոն. Էհ, կրնան ըլլալ . . . բայց խօսք առած էի օրիորդէն միասին պարելու բոլոր սօթիշները . . . :

Միլսոն. Ատոնցմով՝ ինչ աւելի հաճելի եղած չէք ըլլար իրեն . . . :

Մեյֆոն. Միայն պարերը, էճհ : Պատիւ ունեցայ երկու անգամ գետնէն վերցնելու Օրիորդին մետաքս թաշկինակը . . . :

Միլսոն. Ես՝ աւելին ըրի : Երեք անգամ իր մօրը թաշկինակը վերցուցի, պարոն :

Մեյֆոն. Մ'օրը հետ ամուսնանալու միտք ունէիք արդեօր . . . :

Միլսոն. Կ'արգահատիմ ձեր խելքին վրայ որ ձեր հասակէն կարճ է . . . Առանց մօրը սիրտը շահելու աղջիկ կ'առնուի երբէք . . . :

Մեյֆոն. Թողունք թաշկինակը : Ես բաղդն ունեցայ երեք անգամ պիւֆէն առաջնորդելու զինքը . . . փափկասիրտ արարածը, այնքան յուզուած ու բորբոքած էր որ երեք անգամուն ալ . . . միայն խմեց մէկ մէկ շիշ . . . Թաշտէլէնի ջուր . . . :

Միլսոն. Խեղճ սղայ, իմ բռնկցուցած հրդեհիս ջուր հայթայթեր ես, և կը պարծենան . . . : Երբ առաջին անգամ ներկայացայ իրեն, Օրիորդը, նազելի ժպտով մը, «Պարո՛ն, անգլիական բանաստեղծութիւնը կը պաշտե՛մ ես, Միլտոնի սիրահարսն եմ ես . . . օ՛հ . . . » մրմնջեց : Միլտոնին . . . այսինքն ինձի սիրահարած . . . : Իր գարնէն ուզեցի, անբիծ, անարատ էր իրեն պէս, գրեցի մէջը :

Վալս . — Սոխակ մ'եմ սիրահալ, չե՞ն լրսեր երվ-երվալս . . .

Գասրիլ . — Ոսիդ վրայ, բիրուան պէս, կուզէի դադարիլ . . .

Մազուրիս . — Քերթողը կը հիւժի, ժըպիսէդ նա գուրկ, ա՛հ . . .

Բօլիս . — Առանց քեզ՝ կեանքն է մութ . քեզմով պե՛ն ու խօլ կա՛հ . . . :

Մեյֆոն. (ծաղրով) Հիմակուան աղջիկները ատանկ ցնդաբանութեանց ականջ չեն կախեր, կ'ուտ



մ'անգամ չեն տար, բարեկամ . . . եւ սպասցոյցը  
Հանսիէի մէջ ամենէն շնորհալի բէվերամաները ինծի  
ըրաւ օրիորդը և երեք գնդասեղ ուզեց ինէ, երեքն  
ալ գետեղեց . . . կուրծքին վրայ . . .

Միլսոն. Բանի, երեք գնդասեղ . . . հապա ինէ  
ուզածը, որ գնդասեղի գործարան մը կ'արժէ, յան-  
պատրաստից քառեակ մ'ուզեց . . .

Մելինոն. (ժաղրոյ) Վառեանկ . . . վառեակին  
յանպատրաստիցն ինչպէս կ'ըլլայ:

Միլսոն. Ո՛հ, ողբալի ազիտուծիւն . . . վառեակ  
չէ, քառեանկ, բարեկամ, չորս տող ամիրտի յանգաւոր  
քերթուած մը զոր խակոյն յղացայ և . . . ծնայ իր ա-  
նունին վրայ . . .

Սէ՛ր, վա՛ռւք ըզեզ ըսեղծողին .  
Շողգամ, կողամբ, սոխ, ըսեպղին,  
Շուշանաւիպալ ծաղի՛լ կոյսեր  
Ըզեզ կ'երգեն, կը պստեն, Սէ՛ր . . . :

Եւ այս քառեակը օրիորդը զետեղեց իր . . . սրտին մէջ:

Մելինոն. Թողունք գնդասեղները . . . Հապա բոլ-  
բային մէջ որ երեք անգամ ոտքիս վրայ կոխեց —  
դիտմամբ — եւ ամեն անգամուն ալ գորովալից նայ-  
ուածքով մը . . . « Վա՛խ, ցաւցուցի արդեօք . . . »

Միլսոն. (հեզմոտ) Պնրզ ու սովորական խօսք  
մը զոր սիրոյ յայտարարութիւն կարծելու համար  
մարդ պարզապէս . . . ատամնաբոյժ ըլլալու է . . .

Մելինոն. (կիրիով) Զորս ոտքով վառեակ մը շի-  
նէլով աղջկան մը սրտին տիրել կարծելու համար ալ

մարդ պարզապէս . . . քերթո՛ղ ըլլալու է, պարոն . . .  
Յետոյ իր մտերիմ ու սիրուն տեսակցութիւնը, հար-  
ցումները . . . « Բանի տարու էք, պարոն » — « 26 .  
Օրիորդ » — « Ո՛հ ինչ աղէկ . մայր ունիք, պարոն »  
— « Այո՛ Օրիորդ » — « Ո՛հ . ինչ աղէկ . . . : Անունն  
ինչ է, պարոն » — « Բընարիկ հանըմ, Օրիորդ. » —  
« Ա՛հ, ինչ աղէկ, ինչ աղուոր անուն . . . » — « Ճաստ  
ազնիւ էք, Օրիորդ, մեծ մայրս ալ ողջ է, Թէֆարիք  
տուտուն » — « Օ՛հ ինչ աղէկ, ինչ աղէկ . . . » —  
Եւ այս աղջկան վրայ դուք դեռ կը մտածէք, հէ . . .

Միլսոն. Ողբալի էք պարզապէս, պարոն, որով-  
հետեւ ինծի պէս հոգեբան չէք, և չէք մտածեր թէ  
այսօր աղջիկ մը, ո՛չ թէ ձեր տունը Գասըմ Բաշա,  
Պուրվար Տէլիլա, Թիւ 100, հապա Արքայութիւն  
անգամ չ'երթար եթէ գիտնայ որ անոր մէկ անկիւնը  
ձերած Թէֆարիք տուտու մը, միւս անկիւնն ալ  
տրտուան Քնարիկ - կետուր - հանըմ մը կան բազմած  
(հեզմոտ) կը շնորհաւորեմ ձեր յաջողութիւնը . . . և  
չորս ոտքով վառեակ մըն ալ ձեզ կը նուիրեմ . . .  
ճաշակեցէք.

Մեծ վարպետ, իբար Մելինոն Խնդում,  
Ձեր գլխուն վրայ կ'ընեմ երգում  
Թէ Պոլիսէն մինչեւ Պաքում  
Զիկայ հաս մ'ալ ձեզ պէս . . . դըղուն:

Մելինոն. (բարկացած) Բայց զիտէք որ ալ վա-  
ռեակներուն համը կը փախցունէք, պարոն . . .

Միլսոն . . . Եւ որպէսզի զձեզ ալ փախցունեն



հարկ է որ ցոյց տամ ձեզ ձեր արտաբանան վճիռը . . . Օրիորդ Շուշանի ձեռքով իսկ բանուած . . . (Քա-  
նաքէիւն վրայի բարձր ցոյց տալով) :

Մելինն. Այդ բարձր . . . քննէ կայ որ . . . չեմ հաս-  
կընար :

Միլսոն. Ես բերած ու դրած չեմ հոս , այնպէս  
չէ . . . : Նայեցէք :

Մելինն. Թաւիշի վրայ , բանուած բարձ մը , այժ .

Միլսոն. Ակնոց չունիք , աղէկ դիտեցէք , կ'աղա-  
չեմ . — Ծաղկահիւս քնար մը — « Բանաստեղծիքն  
խորհրդանշանը » եւ մէջը Մ' մը « Միլսոն » անուանս  
սկզբնատառը : (Դուռը ցոյց տալով) Պարոն , հրամ-  
մեցէք , բարի ճանապարհ . . . :

Մելինն. (յաւկարծ սքախած , քան քան իւնդա-  
շով) Պարոն , դուք հրամմեցէք , բարի ճանապարհ  
(դուռը ցոյց տալով) Մը Մելինն անուանս սկզբնա-  
տառն է , իսկ Քնարը , էհ , մօրս անունն է , Քնարիկ  
հանրմ . . . Օրիորդին նրբութիւնն և հարգումներուն  
նպատակն ալ կ'ըմբռնէք , այնպէս չէ . . . :

Միլսոն. Հասկցուեցաւ . . . պիտի սպասենք :

Մելինն. Պիտի սպասենք , այժ . ձեր վռնտուիլը  
վայելելու համար : (Պահ մը շուռ . Միլսոն եւ Մելինն  
կը պտտակիւն մընաւալով . Մելինն սեղանիւն վրայի  
շրագիտը կ'առնէ եւ կը պատասխանի կարդալով) :

Միլսոն. Ներեցէք , պարոն , մինչև ցնոր տնօրի-  
նութիւն , մի և նոյն ակնկալութեանց պէս մի և նոյն  
իրաւունքներն ունինք այս տեղ . . . Այդ լրագրին  
կէսը կը հաճիք ինծի տալ :

Մելինն. Շատ աղէկ , պարոն , հրամմեցէք : (Թեր-  
քիւն մեջտեղէն պատնելով կէսը Միլսոնիւն կուտայ)

Միլսոն. Շնորհակալ եմ :

(Պահ մը շուռ . երկուսն ալ զստ զստ կարդալ  
կ'սկսին) :

Մելինն. (կարդալով) « Գաւառական Թղթակցու-  
թիւն . . . Առաջնորդական խնդիր . . . Ներքին լու-  
րեր . . . Գատը-գիւղի շոգեմաւր երէկ մեքենայի  
խանգարում մ'ունեցաւ . . . Հացին զինը . . . Թրամ-  
վայի արկած . . . Ազգ. լուրեր . . . Տնտես . Խորհրդոյ  
նիստը . . . Տիվրիկի կալուածոց հոգաբարձութիւնը . . .  
Մայր Եկեղեցւոյ դպրաց դասը . . . Հարսանեաց հան-  
դէս . . . (խօսելով) Ո՞վ է նայինք — « Երէկ , ի ներ-  
կայութեան երկուց կողմանց ազգական ու բարեկա-  
մաց խումբ բազմութեան , Ֆէրիզիւղի Եկեղեցւոյն մէջ  
տեղի ունեցաւ , առաջնակարգ ծանօթ փաստաբան  
Մինաս Էֆէնտի Մարաշեանի գտներ Օր. Շուշանի  
ամուսնութիւնն ընդ . . . (կը խօսի) քնն , որն  
հետ . . . մնացորդը անդին է :

Միլսոն. (կարդալով) . . . Մելիքիտեղէկ էֆ. Քէ-  
մէնչէլեանի . . . Օր. Շուշան , մտաց ու սրտի ընտ  
բերագոյն ձիրքերով օժտուած , բարեկիրթ ու շնոր-  
հալի , Պոլսոյ հայ իգական սեռին զարդը կազմող ան-  
զամերէն մին է . . . իսկ Մելիքիտեղէկ էֆ. բնիկ  
Զմշկածակցի , ազնուական ընտանիքէ մը սերած և  
երկար տարիներ անդամակցած է իր ծննդավայրին  
Խաարէի Ժողովին , և Թաղական Խորհուրդներուն ալ  
չորս անգամ ատենապետութիւն ըրած է : Ժամա-



նակէ մ'ի վեր փոխադրուած է ի Չօնկուլտախ ուր հիմնուած է և կը վարէ սեղանաւորական կարևոր տուն մը . . . Այս միութիւնը ամէն կերպով յար մար, և փոխադարձ համակրութեան վրայ հիմնուած, անխառն ուրախութեամբ կը լեցունէ սոյն երկու բարեհամբաւ գերդաստաններուն բարեկամաց սրտերը, որոնց մենք ալ կ'ուղղենք մեր ջերմագին շնորհաւորութիւնները . . . (Խօսելով) Բայց այս Օր. Շուշանը — որ մերը չէ անշուշտ — ո՞վ է, որուն աղջիկն է արդեօք . . . : Սկիզբը միւս կտորին վրայ է (Մեղխուն) ներեցէք, պարոն, ձեր կէսը վայրկեան մը կուտանք ինծի :

Մելին. Հապան, ինչո՞ւ չէ, սիրելի պարոն . . . :

Միլսոն. Շատ ազնիւ էք. (ձեռք կ'երկարէ) :

Մելին. Բայց ձեր կէսին հետ փոխանակելու պայմանաւ, պարոն :

Միլսոն. Տո՞ղ մը բան միայն պիտի նայիմ . . . :

Մելին. Ճիշդ ես ալ ձեզի պէս . . .

Միլսոն. Միշոց մը կան . . . մօտենանք եւ միասին կարգանք :

Մելին. Գաղափարը լաւ է. գործադրենք :

(Թերթերը կը մօտեցունեն եւ միաբերան առաջ կը կարդան) . . . Երէկ, ի ներկայութեան երկուց կողմանց ազգական ու բարեկամաց խումբ մութեան, Ֆէրիզիւղի եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ առաջնակարգ ծանօթ փաստաբան Մինաս էֆ. Մարաւեանի դատեր՝ Օր. Շուշանի ամուսնութիւնն ընդ Մելքիսեղեկ էֆ. Քէմէնչէլեանի . . . (Վայրկեան մը

իրարու երես կը նային՝ սուշած, սասամաած, եւ միաբերան բարձրաձայն խնդարով)

Մելին. (բարձր ցոյց տալով) Մ. Ը, ծաղկահիւս Բնարին մէջ բանուած . . .

Միլսոն. . . . Մելքիսեղեկին համար է եղեր, իսկ քնարը, ան, գռեհիկ Քէմէնչէն է՝ Բնարի վերածուած, ինչ ամբարշտութիւն . . . Եւ հարսնիքն ալ կատարուեր, լըմնցեր է երէկ . . . հէ . . . :

Մելին. Եւ մեզի պարզ հրաւեր մը զրկել անգամ չեն մտածեր . . . :

Միլսոն. Ձեզի մանաւանդ, որ երեք գնդասեղ տուեր, երեք շիշ Թաշտէլէն խմցուցեր էք, և թող տուեր էք որ երեք անգամ ալ ոտքերնուդ վրայ կոխէ . . . զխտամբ :

Մելին. Հապա ձեզի, որ ներշնչեալ վառեակներ ձօներ էք իրեն զոր զեանդեր է սրտին մէջ . . . ինչպէս էր. (Ժաղրով)

Կալամբ, սխտր, սոխ, ըստպղին . . .

Շուշանափայլ բոյսեր, կոյսեր . . .

Միլսոն. Օ՛հ, յիմնը, անճաշակ աղջիկ է եղեր :

Մելին. Եւ կեղծաւոր, ու խաբերան, փոփոխափառ . . .

Միլսոն. Եւ գռեհիկ, եղբայր, սոսկալի գռեհիկ, զգացում չիկայ, սի՛րտ չիկայ . . .

Մելին. Հիմակուան աղջիկներէն, ան, Թեթեւ, Թեթեւ, դուք ալ չղիտեցիք վախած ատեննիդ . . . :



Միլսոն. Եւ արդէն, ինչ պիտի ըլլայ . . . Հայրը՝  
խաղամուլ, արբեցող, շուայլ. մայրը՝ բանբասուած  
այնքան . . .

Մեխոն. Ո՛հ, իրան, չեմ ճանչնար, բայց կը մեղ-  
քընամ խեղճ Մելքիսեդեկը, զլխուն փորձա՞նք մը  
առաւ որ . . .

Միլսոն. Հարկան կը ցաւի մարդ, երբ մտածէ թէ  
իրեն պիտի պատահեր ան . . . բայց ո՛վ է, ուրիշ բու-  
սած է այդ Քէմէնչէլեանը. զիտէք . . . :

Մեխոն. Ե՞ս, ոչ. Չմշկածակցի է եղեր և հոն չորս  
անգամ թաղ. Խորհուրդի Ատենապետ եղած . . .  
Դո՛ւք :

Միլսոն. Ե՞ս. բնան. — Զօնկուլտախ սեղանաւոր  
է եղեր. այնպէս չկարդացինք . . . և այր ու կին հոն  
գացեր են ձեպընծաց . . . առագաստանաւո՞վ . . . :

Մեխոն. Բարի ճանապարհ, իրարու խէր տեսնան :

Միլսոն. Խօսքը մէջերնիս, աղէկ ազատեցանք  
երկուքս ալ :

Մեխոն. Հարկան, բնդդ ունինք եղեր, աչու ընխ  
լոյս :

Միլսոն. Պզտիկ վտանգ չէր որ անցաւ . . .

Մեխոն. ( շնորհիջեղով ) . . . Ու Զանկուլտախ  
գնաց. . . ժամ երթալու, մոմ վառելու բան է աս . . .  
մտածէ. ինչ պիտի ըլլար մեր վիճակը . . .

Միլսոն. Յրմահ տաժանակիր . . . ամուսնութեան  
պիտի դատապարտուէինք, անվերջ տառապանք,  
անմարելի կրակ կեանք մը պիտի ունենայինք . . . Եւ  
ըսել թէ՛ աննշան մարդու մը առած տարած անշահ

մէկ աղջկան համար, հոս մյսքան նեղացանք, բար-  
կացանք ու նախատեցինք զիրար :

Մեխոն. Հապա ես, ես որ այնքան ծաղրեցի  
զձեզ, այնքան ցաւցուցի ձեր բանաստեղծի զիւրա-  
զգած սիրտը . . . ( ձեռքն երկարեղով ) կը ներէք,  
այնպէս չէ :

Միլսոն. Ո՛հ. ինչպէս. ես ալ ձեզ վշտացուցի բա-  
ւական . . . ( Դրսէն դրան զանգակի ճայն ) Ա՛հ,  
դ՛ուռն է, Մինաս էֆէնտին չըլլայ, ինչ պիտի ըսենք  
իրեն . . . կծկենք, բարեկամ :

Մեխոն. Հապան, կծկենք, կծկենք. . . : ( Երկուքն  
ալ դէպի խոր, դրան առջեւ հասնելով ) : Անցէք,  
կ'աղաչեմ . . . :

Միլսոն. Չենէ վերջը, կը խնդրեմ, անցէք :

Մեխոն. Ա՛հ, վայրկեա՞ն մը . . .  
Ազդերէս քանի մը հատ ցանցնեմ հոս տեղ, եկող  
գացող կ'ըլլայ, յաճախորդ կը շահիմ . . . մէկ քանի  
հատ ալ սպասուհիին կը ձգեմ դուրսը . . . : Երթանք,  
բարեկամ : ( Թեւ թելի դուրս կ'ելլեն )

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր





-դուք , գմարարժմ մագստն սոմ , դանամ մախչրա վ  
 : դուքի գմխճուստիամ ա գմար  
 վեճդրոն մագստն դս սմ , սմ սրտն . մոխրՄ  
 -ադուքի վերաաստմայ դեճ վրտոց սոց մագստն , բմ  
 , գլխմ դմ (խաչմախչրմ մխմն) . . . . . ցադիս ճա  
 : Էք սխրմ  
 -սպ վրտոցսոցի բնճ յա սմ , սխրսոցի . մՄ . մոխրՄ  
 . մՄ ( մխտն վխարմասք մարդ մ ճարմ ) . . . . մախ  
 գմմայ ժուխս չմի , լայլոց մխտնճի սամմՄ , ճ մո  
 : Նախնդայ , գմնիկն . . . . մմ  
 մխտնի ) . . . . գմնիկն , գմնիկն , սրտն , մոխրՄ  
 , գլխմն (խաչմմաստն ճնջուս մարդ , գամ ճ ք ճ ք  
 . . . . . Նոչարս  
 : գլխմն , Նոչարսի դի , ցոցմի ճնճ . մոխրՄ  
 . . . . . ցն մՄ սմխիլայի . մՄ . մոխրՄ  
 բախմ , բուս սոմ Նոչարսոց սամ ցն ժնոց սխրսոց  
 ժնոց բն . . . . Նոչարս ցի բզբսխմայ , լայլոցի բոց  
 , գմննդն . . . . . ցադար Նոչրն ցի մխմնաստրս յա սմ  
 ( մնչմնՄ սուտք ճ ճնջ ճնճ ) : Նախնդ

Գ Յ Ո Ք Ո Գ Մ Ի



Հայաստանի Ազգային գրադարան



NL0423537



59.686

